

ՄԵՐԻ ՆԻԿՈԼԱՅԱՆ

Բանկային գործ, բալկավիրիապ, 4-րդ կուրս

ՎԱՐԿԱՅԻՆ ՍՔՈՐԻՆԳ. ՍՔՈՐԻՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԸ

Հիմնաբառեր. սքորինգային համակարգ, վարկունակության գնահատում, վարկային բյուրո, վարկային սքորինգի մոդել

Վարկային պարմություն չունեցող անձանց սքորը մոտ է միջինին: Դա նշանակում է, որ այն անձինք, որոնք դեռևս չեն վարկավորվել, նույնպես հնարավորություն կստանան վարկավորվելու և ձևավորելու որոշակի վարկային պարմություն: Այնուամենայնիվ, սքորի միջին մակարդակը ցույց է տալիս, որ սքորինգային համակարգը հաճախորդի՝ նախկինում ունեցած վարկային տվյալների բացակայության դեպքում տեսնում է անորոշության ռիսկի գործոն: Մյուս կողմից, մենք դեռևս չգիտենք նոր հաճախորդի վարքագիծը, հետևաբար կարելի է ստանձնել այդ ռիսկը և դրա դիմաց ստանալ եկամուտներ:

Վիճակագրության մեջ ընտրանքը մասերի բաժանելու գաղափարը 1936 թ. առաջ է քաշել Ռ. Ֆիշերը: 1941 թ. Դ. Դյուրանը առաջին անգամ տվյալ մեթոդն օգտագործել է՝ վարկերը բաժանելու «լավ» և «վատ» վարկերի: Այսօր սքորինգային համակարգը վարկային ռիսկի կառավարման ամենաարդիական համակարգերից մեկն է, որը վերլուծում է վարկառուի՝ պարտքի վերադարձման ռիսկը: Սքորինգը վարկառուի վարկարժանության գնահատականն է, որը վիճակագրական կամ մաթեմատիկական տեխնիկայի կիրառման մոդել է, և որի օգնությամբ, հիմնվելով նախկին հաճախորդների վարկային պատմության վրա, բանկը փորձում է որոշել, թե որքան է հավանականությունը, որ վարկառուն վարկը կվերադարձնի ժամկետներում:¹

Հաճախորդի դիմումը ստանալուց հետո վարկատու կազմակերպությունը սկսում է նրա վարկարժանության գնահատման գործընթացը, որը կարող է տարբեր խորության լինել թե՛ ծախսվող ժամանակի տեսանկյունից, և թե՛ ուսումնասիրվող տեղեկատվության: Քանի որ տարբեր վարկային կազմակերպություններում և բանկերում գործընթացը կարող է տարբեր լինել, կարելի է ներկայացնել դասական տարբերակը: Վարկարժանության գնահատման առաջին քայլը վարկառուից ստացված առաջնային տեղեկության հիման վրա նախնական եզրակացությունն է, որի համար օգտագործվում են վարկատուի կողմից պահանջվող տարբեր փաստաթղթեր անձի նույնականացման, ֆինանսական վիճակի ճշգրտման և այլ գործոնների վերաբերյալ: Վերլուծելով ստացված փաստաթղթերը՝ վարկատուն ընդունում է նախնական որոշում՝ շարունակել վարկարժանության գնահատման գործընթացը կամ մերժել հաճախորդին (եթե վերջինս չի համապատասխանում վարկատուի կողմից սահմանված նախնական չափանիշներին): Դրական եզրակացություն ունենալուց հետո վարկատուն դիմում է վարկային բյուրո՝ ստանալու հաճախորդի վարկային պատմությունը, որը ներառում է տվյալ անձի կողմից ֆինանսական պարտավորություններ կատարելու պարտաճանաչությունը և ստանձնած պարտավորությունների ծավալն ու տեսականին:


¹ <http://www.armbanks.am>

«ԱՔՌԱ քրեդիտ ռեփորթինգ» ՓԲԸ-ն, որը Հայաստանում առաջին մասնավոր վարկային բյուրոն է, հիմնադրվել է 2004 թ. հունվարին և արդեն բազմաթիվ պայմանագրեր է ստորագրել ՀՀ-ում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների հետ: ԱՔՌԱ վարկային բյուրոյի հիմնական նպատակն է այդ կազմակերպություններից տեղեկության հավաքագրումը, մշակումը, պարբերաբար թարմացումն ու տրամադրումը լիազորված կառույցներին՝ ապահովելով տվյալների գաղտնիությունը անիրավասու անձանցից:¹

Ամերիկյան բանկային համակարգում տարածված են մեկից ավելի վարկային բյուրոներ, որոնք էլ իրենց հերթին առաջարկում են տարատեսակ սքորինգային համակարգեր: Համակարգերը իրարից տարբերվում են թե՛ սքորի ձևավորման մոտեցումներով, թե՛ արդյունքում ստացված ցուցանիշներով:

Ամենաճանաչված համակարգերից մեկը **The FICO credit score**-ն է: Այս տեսակը անքայն մեծ տարածում ունի, որ հաճախ ամերիկյան վարկատուները նշում են, որ համակարգը անգամ կարող է որոշակի տարբերություններ ցուցաբերել՝ կախված տրամադրող վարկային բյուրոյից, ինչպես նաև առաջարկվող վարկատեսակից:

The FICO credit score-ի բաշխման սխեման հետևյալն է՝



Գծապատկեր 1. FICO credit score-ի բաշխման սխեման²

Սակայն ԱՄՆ-ում The FICO credit score-ը միակը չէ: Գրեթե ամեն բյուրո առաջարկում է իր կողմից մշակված սքորինգային համակարգը: ԱՄՆ-ում գերիշխող են **Experian, Equifax Trans Union** սքորինգային համակարգերը: Վերջիններիս կողմից ներկայացվող արդյունքները տարբեր են: Ստորև մի քանի օրինակ.

- FICO: 300 – 850
- Experian: 330 – 830
- Equifax: 300 – 850
- TransUnion: 300 – 850

¹ <https://www.acra.am>

² Կազմված է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով The FICO credit score-ի պաշտոնական կայքի տվյալները:

- VantageScore: 501 – 990 (չափվում է տառային միավորներով, A-F):¹

Միջազգային փորձում գոյություն ունեն վերազգային առևտրային ընկերություններ, որոնք իրենք են օգտագործում սքորինգային համակարգեր և իրենց հաճախորդներին վաճառում են ոչ թե չմշակված տեղեկություն, այլ արդեն հաշվարկված ինտեգրալ ցուցանիշ՝ վարկարժանության գնահատական: Ընդ որում, նման ընկերությունների ծառայությունների նկատմամբ պահանջարկը ավելանում է ինչպես սպառողական վարկավորման աճի, այնպես էլ ապահովագրական ընկերությունների կողմից վարկերը ապահովագրելու նոր ծառայության շնորհիվ: Այժմ սքորինգային համակարգերը օգտագործվում են ոչ միայն դիսկի գնահատման համար, այլ նաև մարքեթինգային նկատառումներով (որոշելու համար, թե նոր առաջարկվող ապրանքները բնակչության որ մասի կողմից ավելի ջերմորեն կընդունվեն):

Ուսումնասիրելով տեղական և միջազգային սքորինգային համակարգերի այն հիմնական ցուցանիշները, որոնց հիման վրա կատարվում է վարկունակության գնահատումը, մշակել ենք սեփական սքորինգային համակարգ, որը կառուցված է հետևյալ օրինաչափության վրա. SCORING բառի յուրաքանչյուր տառ մեկ կամ մի քանի բնութագրիչների խումբ է, որոնց տրված են որոշակի արժեքներ, դրանցից յուրաքանչյուրին էլ՝ համապատասխան միավորներ: Վարկունակությունը գնահատելու համար տվյալ վարկառուի միավորները գումարվում են, ստացված արդյունքը պետք է համեմատել համակարգի նվազագույն, միջին և առավելագույն միավորների հետ:

Վարկային սքորինգի մեր մոդելը հետևյալն է.

Աղյուսակ 1

Վարկային դիսկի գնահատման մոդել²

	Ցուցանիշ	Արժեք	Միավոր
S	Shpare Of Activity/ Գործունեության ոլորտը	SS ոլորտ	10
		Ֆինանսական ոլորտ (առույտ/հաշվապահական/ապահովագրական/վարկային կազմակերպություններ)	9
		Պետական (արդարադատության, պաշտպանության ոլորտ)	9
		Առողջապահության ոլորտ	8
		Կրթական ոլորտ	7
		Այլ	5
		Չի աշխատում	3
C	Credit History/ Վարկային պատմությունը	Ուշացումներ մինչև 10 օր	9
		Ուշացումներ 10-20 օր	4
		Ուշացումներ 30 օր և ավելի	2
		Չունի վարկային պատմություն	3
O	Obligations to Income Պարտավորություններ/ եկամուտ	Պարտավորություններ _____ ≤50% Ամսական եկամուտ	7
		Պարտավորություններ 50%≤ _____ ≤60% Ամսական եկամուտ	5
		Պարտավորություններ _____ ≥60% Ամսական եկամուտ	2

¹ <https://themilitarywallet.com/different-types-of-credit-scores/>

² Կազմված է հեղինակի կողմից:

R	Revenues And Expenses Եկամուտներ և ծախսեր	Վարկի ամսական գումար _____ ≤10%	8
		Ամսական եկամուտ	
		Վարկի ամսական գումար 10%≤ _____ ≤30%	5
		Ամսական եկամուտ	
I	In The Black/ Բանկային հաշվին եղած գումար	Վարկի ամսական գումար _____ ≥30%	3
		Ամսական եկամուտ	
		Աշխատավարձի քարտ վարկատու բանկում	8
		Աշխատավարձի քարտ այլ բանկում	5
N	Net Mounthly Income Չուտ ամսական եկամուտ	Վարկային գիծ/օվերդրաֆտ	3
		Ավանդ	9
		Աշխատավարձ	7
		Բիզնեսից ստացվող եկամուտ	8
G	Guaranty /Երաշխավորություն /ապահովվածություն	Օգնություն արտերկրից	4
		Այլ	4
		Անշարժ/շարժական գույքի գրավ	9
		Երաշխիք/երաշխավորություն	5
		Չունի	3

Մոդելի կիրառման կառուցակարգը ցույց տալու համար հաշվարկվել է իմ վարկունակությունը և իրականացվել վերլուծություն: Վարկային սքորի առավելագույն չափը 60 միավոր է, նվազագույն չափը՝ 20 միավոր, միջինը՝ 40 միավոր: Դիցուք՝ որպես վարկառու դիմել եմ՝ 3 տարի ժամկետով 500,000.00 դրամ վարկ ստանալու համար:

Աղյուսակ 2

Սքորի վրա ազդող գործոններ¹


	Ցուցանիշ	Արժեք	Միավոր
S	Shpare Of Activity	Ֆինանսական ոլորտ	9
C	Credit History	Չունի վարկային պատմություն	3
O	Obligations To Income	Պարտավորություններ _____ ≤50%	7
R	Revenues And Expenses	Ամսական եկամուտ	
		Վարկի ամսական գումար 10%≤ _____ ≤30%	5
I	In The Black	Ամսական եկամուտ	
		Աշխատավարձային քարտ վարկատու բանկում	8
N	Net Mounthly Income	Աշխատավարձ	7
G	Guaranty	Չունի	3

Վարկառուի վարկային սքորը կկազմի՝

9S+3C+7O+5R+8I+7N+3G=42SCORE

Կատարվածից երևում է, որ վարկային պատմություն չունեցող անձանց սքորը մոտ է միջինին: Դա նշանակում է, որ այն անձինք, որոնք դեռևս չեն վարկավորվել, նույնպես հնարավորություն կստանան վարկավորվելու և ձևավորելու որոշակի վարկային պատմություն: Այնուամենայնիվ, սքորի միջին մակարդակը ցույց է տալիս, որ սքորինգային համակարգը, հաճախորդի նախկինում ունեցած վարկային տվյալների բացակայության դեպքում, տեսնում է անորոշության ռիսկի գործոն: Մյուս կողմից, մենք դեռևս չգիտենք նոր հաճախորդի վարքագիծը, հետևաբար կարելի է ստանձնել այդ ռիսկը և դրա դիմաց ստանալ եկամուտ:

¹ Կազմված է հեղինակի կողմից:



Գծապատկեր 2. Վարկառուի դիրքը համակարգում

Թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում ներկայացնել ՀՀ-ում սքորինգային համակարգի բարելավմանն ուղղված հետևյալ հիմնական առաջարկությունները.

- Սքորինգային համակարգերով վարկառուի վարկունակության գնահատումը տարածվում է միայն այն հաճախորդների վրա, որոնք վարկավորվել են: Մենք պատկերացում չունենք, թե ինչ վարքագիծ կունենային այն հաճախորդները, որոնք առաջին անգամ են դիմել վարկ ստանալու համար և մերժվել են: Հնարավոր է, որ նրանց մի մասը լիովին ընդունելի վարկառուներ լինեին: Այս դեպքում նպատակահարմար կլինի վարկային մասնագետի կողմից վարկառուի վարկունակության գնահատում՝ նաև այլ ցուցանիշներ հաշվի առնելով, իսկ վարկավորման մերժում՝ ակնհայտ և ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքում:
- Այսօր սքորինգի կառուցակարգերը թույլ չեն տալիս լիարժեք ճշգրտությամբ գնահատել հաճախորդի վարկունակությունը: Շուկային անհրաժեշտ են տեղեկատվության նոր աղբյուրներ: Կարծում ենք՝ այդպիսի աղբյուր կարող են հանդիսանալ սոցցանցերը, որոնցից ստացված տեղեկությունը թույլ է տալիս կատարել վարքագծի կանխատեսումներ: Այս մեթոդը արդյունավետ է կիրառել նոր հաճախորդների համար, որոնք չունեն վարկային պատմություն և որևէ բանկի հաճախորդ չեն: Իսկ գործող հաճախորդների՝ սոցցանցերում ունեցած տվյալների ուսումնասիրությունը կարող է օգնել՝ հաճախորդներին հատուկ պրոդուկտ առաջարկելիս:

МЕРИ НИКОЛАЯН
КРЕДИТНЫЙ СКОРИНГ: МОДЕЛЬ ЭФФЕКТИВНОСТИ СКОРИНГОВОЙ СИСТЕМЫ

Ключевые слова: система скоринга, оценка кредитоспособности, кредитное бюро, модель кредитного скоринга.

¹ Կազմված է հեղինակի կողմից:

Система показателей для людей, не имеющих кредитной истории, близка к средней, что означает, что те, кто еще не был одолжен, также смогут кредитовать и формировать определенную кредитную историю. Тем не менее, средний уровень скоры показывает, что система оценки видит фактор риска неопределенности в отсутствие ранее существующих кредитных данных. С другой стороны, вы не знакомы с поведением нового клиента, поэтому можете пойти на этот риск и получить прибыль.

MERY NIKOLAYAN

CREDIT SCORING: SCORING SYSTEM PERFORMANCE MODEL

Key words: scoring system, creditworthiness assessment, credit bureau, credit scoring model.

The scorecard of people with no credit history is close to the average, which means that those who have not yet been lent, will also be able to lend to and form a certain credit history. However, the average level of scorpion shows that the scoring system sees a risk factor of uncertainty in the absence of previously existing credit data. On the other hand, we still do not know the behavior of a new customer, so you can take that risk and get revenues.

ԺԱՆՆԱ ՈՍԿԱՆՅԱՆ

Ֆինանսներ, բակալավրիատ, 2-րդ կուրս

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. ՀՀ բանկային համակարգ, վարկ, վարկային պորտֆել, առևտրային բանկեր, ՀՆԱ, հարաբերակցություն

Ներկայումս Հայաստանի ֆինանսական շուկայի ամենամեծ ոլորտը բանկային համակարգն է, իսկ զարգացած և կայացած վարկային հարաբերությունները յուրաքանչյուր երկրի ֆինանսական շուկայի կարևոր բաղկացուցիչն են: Վերլուծելով ՀՀ բոլոր առևտրային բանկերի վարկային պորտֆելների վերջին երեք տարիների ցուցանիշները՝ կարող ենք ասել, որ վարկային շուկան ՀՀ-ում ունի աճի և զարգացման միտում: Նշենք, որ 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ 17 առևտրային բանկերից վարկային պորտֆելով առաջատար 5 բանկերը կազմել են ընդհանուր վարկային պորտֆելի 60,7%-ը, իսկ ամենամեծ վարկային պորտֆելը, որը պատկանում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին, կազմել է ընդհանուրի 18,1%-ը:

Հայաստանի մուտքը միջազգային շուկա էապես կապված է վարկային հարաբերությունների զարգացման և կայացման հետ:

Վարկը ֆինանսական գործիք է, որը քաղաքացուն կամ ձեռնարկությա՜նը հնարավորություն է ընձեռում դրամ փոխառել՝ ապրանքներ, հումք և այլ բաներ գնելու համար՝ վճարումը կատարելով որոշ ժամանակահատվածում, սովորաբար՝ տոկոսով: Բանկային վարկավորման հարաբերությունների սուբյեկտներն են տնտեսավարող մարմինները, բնակչությունը, պետությունը, ինչպես նաև բանկերը: Վարկային գործարքում վարկային հարաբերությունների սուբյեկտները հանդես են գալիս որպես փոխատու և փոխառու: Փոխա-